

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ  
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ծ Ր Ա Գ Ի Ր**

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ  
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ  
2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ**

**ԱՏԵՓԱՆԱԿԵՐՏ 2016**

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Նախաբան .....	3
I. Հանրային ծառայությունների կարգավորման բնագավառ .....	4
II. Տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառ .....	9
III. Համագործակցություն Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական կառավարման և այլ մարմինների հետ .....	11
IV. Հանձնաժողովի գործունեության հրապարակայնության, թափանցիկության ապահովումը .....	12
V. Հանձնաժողովի բյուջետային մուտքերի ապահովումը .....	13

## ՆԱԽԱԲԱՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի տարեկան գործունեության սույն ծրագիրը մշակվել է «Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող մարմնի մասին», «Էներգետիկայի մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Հեռուստատեսության և ռադիոյի մասին», «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին», «Փոստային կապի մասին», «Տեխնիկական արատորոշման միջոցներով տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման և վերանայման մասին», «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքների և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային օրենսգրքի հիման վրա:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) էներգետիկայի (էլեկտրաէներգետիկա, ջերմամատակարարում, գազամատակարարում), հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության), հեռուստատեսության և ռադիոյի, տնտեսական մրցակցության պաշտպանության, փոստային կապի (ուճիվերսալ ծառայությունների սակագների սահմանման մասով), տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման (սակագների մասով) բնագավառներում և ջրային ոլորտում (խմելու, ոռոգման, արդյունաբերական ջրի մատակարարում, ջրահեռացում և կեղտաջրերի մաքրում) կարգավորում է իրականացնում իրեն վերապահված իրավասությունների շրջանակում:

Ծրագրում ներկայացված են կարգավորման հիմնախնդիրներն ու Հանձնաժողովի կողմից 2017 թվականին իրականացվելիք աշխատանքները: Դրանք միտված են՝

- շարունակելու զարգացնել պետական քաղաքականության մաս հանդիսացող կարգավորման գործընթացը,
- նպաստելու երկրի տնտեսության զարգացման գործընթացին,
- մրցակցությունը ապահովելու նպատակով՝ գործող օրենքներում խոչընդոտող (սահմանափակող) դրույթները վերանայելուն:

Շուկայի սահմանափակվածության պատճառով Հանձնաժողովը հանրային ծառայությունների, տնտեսական մրցակցության պաշտպանության և հատկապես հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության), հեռուստատեսության և ռադիոյի բնագավառներում գնային և սակագնային քաղաքականության ձևավորման վրա էական ազդեցություն գործելու նպատակով այլ ներդրողներ ներգրավելու քայլեր կձեռնարկի:

Հանձնաժողովի գործունեության գերակա ուղղություններն են.

- Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում սպառողների և կարգավորվող անձանց իրավունքների պաշտպանությունը, նրանց շահերի հավասարակշռումը, կարգավորվող ենթակառուցվածքներում արդյունավետ ներդրումների խրախուսումը, ազատ տնտեսական մրցակցության պաշտպանությունը, ձեռնարկատիրության

զարգացումը, էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների հասանելիության աշխարհագրության մեծացումը և մատչելիության ապահովումը, գործարար միջավայրի բարելավումը:

2017 թվականին նախատեսվող քաղաքական գործընթացների ընթացքում Հանձնաժողովը մշտադիտարկումների միջոցով առանձնահատուկ վերահսկողություն է իրականացնելու ընտրությունների և հանրաքվեների մասին օրենսդրությանը հանրաքվեների և ընտրությունների քարոզչության ժամանակաշրջանում հեռուստա-ռադիոհաղորդումների համապատասխանությունը ստուգելու նպատակով:

Հանձնաժողովը 2017 թվականի ընթացքում գործելու է սույն ծրագրի և ծրագրից բխող ենթածրագրերի շրջանակներում:

Հիմնվելով նախորդ տարիներին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովում հրապարակած և կարգավորման ենթակա բնագավառներում իրականացրած միջոցառումների և աշխատանքների վերլուծությունների վրա՝ Հանձնաժողովը 2017 թվականի ընթացքում նախատեսում է.

## I. Հանրային ծառայությունների կարգավորման բնագավառ

Հանձնաժողովի առաջնահերթ խնդիրներից է համարվում *էներգետիկայի և ջրային ոլորտների* արդյունավետ գործունեության կարգավորումը:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գործում է մեկ՝ 10 000 կՎտ-ից բարձր տեղակայված հզորությամբ (Սարսանգ ՅԷԿ), և 12՝ մինչև 10 000 կՎտ տեղակայված հզորությամբ հիդրոէլեկտրակայան (փոքր ՅԷԿ-եր), որոնց դրվածքային հզորությունը կազմում է 92,936 ՄՎտ, էլեկտրաէներգիայի միջին տարեկան արտադրանքը՝ 320,899 մլն. կՎտ/ժ: Կառուցման փուլում է գտնվում 6 փոքր հիդրոէլեկտրակայան՝ 21,199 ՄՎտ դրվածքային հզորությամբ և 138,365 մլն. կՎտ/ժ էլեկտրաէներգիայի միջին տարեկան արտադրանքով:

2017 թվականի վերջին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների թիվը կավելանա 19.4 ՄՎտ դրվածքային հզորությամբ և 108.2 մլն կՎտ/ժ արտադրությամբ ևս 4-ով:

Ծրագրային տարում շարունակվելու է մասնակցությունը *էներգետիկայի բնագավառի և ջրային համակարգերի* կարգավորման իրավական դաշտի կատարելագործմանն ուղղված հետևյալ աշխատանքներին՝

- Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «էներգետիկայի մասին» օրենքում և ջրային օրենսգրքում Հանձնաժողովի կարգավորման դաշտը ընդլայնող և լիցենզավորված գործունեության իրականացման պայմանները բարելավող փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի մշակում և քննարկում,

- հանրային ծառայությունների ոլորտը կարգավորող իրավական ակտերի, մասնավորապես՝ նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը բնական գազի բաշխման ցանցին միացման կանոնների, բնական գազի մատակարարման (Մատակարար-Բաժանորդ (կազմակերպություն)) պայմանագրի օրինակելի ձևի, խմելու ջրի մատակարարմանը ներկայացվող սպասարկման որակի նվազագույն պահանջների մշակում, լրամշակում,

- սպառողների դիմումների և բողոքների ընթացքավորման վերաբերյալ տեղեկատվության ներկայացման նոր կարգերի սահմանում:

Դիտարկվելու են բնական գազի բաշխման ցանցին միացման գործընթացների համար սահմանված ժամկետների կրճատումը, ինչպես նաև միացման վճարների սահմանման հետ կապված հարցերը:

Հանձնաժողովի կողմից շարունակվելու է 5,8 ՄՎտ դրվածքային հզորությունը գերազանցող ջերմային էներգիայի արտադրության, փոխադրման և բաշխման գործունեություններ իրականացնող համակարգերի կարգավորումը (լիցենզավորման և սակագների սահմանման մասով):

Շարունակվելու են մշտադիտարկումները գնագոյացման ընթացքի նկատմամբ:

**Հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության), հեռուստատեսության և ռադիոյի** բնագավառները իրենց բազմաբնույթ ուղղություններով, խնդիրներով և գործառնություններով շարունակվելու են մնալ Հանձնաժողովի գործունեության գերակա ուղղություններից:

Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում լիցենզավորված 3 ընկերություններից գործունեություն է ծավալում մեկ ընկերություն, իսկ մյուս երկու ընկերությունները լիցենզիաներով նախատեսված գործունեության տեսակներով ներկայումս չեն զբաղվում: Հանձնաժողովի կողմից տրամադրված են ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվություններ 13 ընկերությունների: Հեռուստատեսության և ռադիոյի բնագավառում տրամադրված արտոնագրերի (լիցենզիաների) հիման վրա ռադիոհաղորդումների հեռարձակման (վերահեռարձակման) գործունեությամբ զբաղվում է 11, իսկ հեռուստածրագրերի հեռարձակմամբ (վերահեռարձակմամբ)՝ 3 ընկերություն, որից 2-ը՝ եթերային և 1-ը՝ կաբելային: Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գործում է մեկ հանրային հեռուստա-ռադիոընկերություն:

**Լիցենզավորման քաղաքականությունը:** Հանձնաժողովի կողմից իրականացվող լիցենզավորման գործառնությից հնարավորություն է տալիս մրցակցության բացակայության կամ սահմանափակ մրցակցության պայմաններում կարգավորվող բնագավառներում գործունեություն իրականացնող ընկերությունների համար գործունեության միասնական չափանիշների սահմանման միջոցով հավասարակշռել սպառողների և այդ ընկերությունների օրինական շահերը, կարգավորման դաշտում գործող տարբեր ընկերությունների համար վարել միատեսակ քաղաքականություն, ինչպես նաև՝ իրականացնել լիցենզավորված անձանց տրամադրված լիցենզիայի պայմանների վերահսկում, իսկ դրանց չկատարման դեպքում՝ լիցենզավորված անձանց նկատմամբ պատասխանատվության միջոցների կիրառում:

2017 թվականին կշարունակվեն լիցենզավորման գործընթացները՝ որպես կարգավորման կարևորագույն գործիքների կիրառում, միաժամանակ հետամուտ լինելով նշված գործընթացին բնորոշ գործիքակազմի հետևողական կատարելագործմանը և արդյունավետության բարձրացմանը:

Կարգավորվող ոլորտում իրականացվող լիցենզավորման և վերահսկողության գործառնությունների ուղղությամբ ներառվելու են հետևյալ աշխատանքները.

- «Սահման» սահմանափակ պատասխանատվությամբ և «ԱրցախՅԷԿ» բաց բաժնետիրական ընկերությունների կողմից համապատասխանաբար «Սահման» և «Թրդի 4», «Լև 1» փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման ավարտման դեպքում և

համապատասխան հայտերի հիման վրա Հանձնաժողովի կողմից կայաններում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության համապատասխան լիցենզիաների տրամադրում,

• 4 փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման վերաբերյալ փաստաթղթերը ձևակերպելու դեպքում և համապատասխան հայտերի հիման վրա Հանձնաժողովի կողմից կառուցման համապատասխան լիցենզիաների տրամադրում:

Հանձնաժողովն ընթացիկ տարում *հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության), հեռուստատեսության և ռադիոյի* ու փոստային կապի **բնագավառներում** կիրականացնի հետևյալ հիմնական միջոցառումներն ու աշխատանքները.

• օրենսդրության պահանջներին բավարարման դեպքում ցանցի կան ծառայությունների մատուցման լիցենզիայի ստացման հայտեր ներկայացրած անձանց լիցենզավորում,

• մի շարք ազատ (չգրադեցված) հաճախականություններում ռադիո-հաղորդումների հեռարձակման (վերահեռարձակման) լիցենզավորման մրցույթների հայտարարում,

• ոլորտը կարգավորող իրավական ակտերի պահանջներին և տրամադրված արտոնագրերի պայմաններին հեռուստառադիոհաղորդումների եթերների բովանդակության համապատասխանության ստուգում՝ հեռուստառադիոհաղորդումների գրանցամատյանների ամենամյա տվյալների հետ համադրման միջոցով,

• իրավական դաշտի կատարելագործում,

• սահմանափակ ռեսուրսների, այդ թվում՝ կարգավորողի տնօրինմանը ենթակա ռադիոհաճախականությունների տիրույթի, համարների և արբանյակային ուղեծրի հատվածների արդյունավետ օգտագործման պլանավորում և համակարգում,

• ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների ստացման համար ներկայացվող հայտերի ուսումնասիրում, դիտանցումների և համապատասխան թույլտվությունների տրամադրման գործընթացի կազմակերպում,

• Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում առանց պահանջվող թույլտվության ռադիոհաճախականություններ օգտագործող անձանց օրինական դաշտ ներգրավելու ուղղությամբ աշխատանքների ծավալում,

• Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ռադիոսիրողական գործով զբաղվելու ցանկություն ունեցող քաղաքացիներին համապատասխան թույլտվությունների տրամադրման գործընթացի կազմակերպում, ինչպես նաև ռադիոսիրողներին և ռադիոսպորտսմեններին իր շուրջը համախմբելու ու որակավորման չափանիշներին սիրողական ռադիոսպորտորների համապատասխանությունը ստուգելու որակավորման քննությունների կազմակերպմանը օժանդակություն:

Հանձնաժողովը հսկողություն է իրականացնելու ընկերությունների կողմից լիցենզիայի պայմանների պահպանման, իրավական ակտերի պահանջների կատարման և կարգավորման ոլորտներում հանրության կողմից հնչեցվող բողոքների ընթացքավորման նկատմամբ:

**Սակագնային քաղաքականությունը:** Սակագնային կարգավորումը հիմնվում է համաշխարհային պրակտիկայում ընդունված անհրաժեշտ հասույթի ապահովման՝ ինքնարժեք գումարած շահույթ սկզբունքի վրա և նպատակաուղղված է հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց

բնականոն տնտեսական գործունեության ապահովմանը, սպառողների և կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերի հավասարակշռմանը, ինչպես նաև հնարավորություն ընձեռելու իրականացնելու արդիականացման և հեռանկարային զարգացման ծրագրերը:

Քանի որ սակագների կառուցվածքի միջոցով կարելի է ազդակներ հաղորդել համակարգի զարգացմանը, Հանձնաժողովը 2017 թվականի ընթացքում հետևողականություն կդրսևորի սակագնային քաղաքականության կատարելագործման աշխատանքների նկատմամբ, մասնավորապես՝

- 2017 թվականի հունվարի 1-ից կվերանայվեն սպառողներին վաճառվող բնական գազի սակագները (նվազեցման միտումով),

- կիրականացվեն անհրաժեշտ հետազոտություններ էլեկտրաէներգիայի տարբեր լարման սակագների միջև ծախսերի ու ներդրումների բաշխման սկզբունքների և համապատասխան մեթոդաբանության մշակման և դրան փոխկապակցված՝ բաշխման ցանցի մարժայի սահմանված մեծությունների հաշվարկի մեխանիզմների կատարելագործման ուղղությամբ,

- հաշվի առնելով դրամի փոխարժեքի տատանումները և սղաճի փոփոխությունները՝ սահմանված կարգով կճշգրտվեն փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագները,

- կվերանայվեն էներգետիկայի բնագավառում գործող սակագները՝ հիմքում ունենալով տնտեսության և հասարակության համար զգալի նշանակություն ունեցող ոլորտները:

***Հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության), հեռուստատեսության և ռադիոյի ու փոստային կապի բնագավառներում*** կիրականացվեն հետևյալ աշխատանքները.

- ոլորտի գերիշխող օպերատորի կողմից ներկայացված կամ կարգավորողի նախաձեռնությամբ պահանջված հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների կարգավորման ենթակա սակագների, ինչպես նաև փոստային կապի ունիվերսալ ծառայությունների սակագների սահմանման և վերանայման հայտերի ուսումնասիրություն, վերլուծություն և համապատասխան սակագների սահմանում,

- ուշադրության կենտրոնում կպահվի լայնաշերտ (արագագործ) ինտերնետ հասանելիության ծառայությունների բարելավման հարցը, կիրականացվեն արագագործ ինտերնետային ծառայություններ մատուցելու հնարավորությունների մեծացմանը նպաստելուն ուղղված քայլեր,

- ծառայություններ մատուցողների կողմից գանձվող վճարները կարգավորելիս կապահովվի, որպեսզի տվյալ ծառայություններ մատուցողները հնարավորություն ունենան արդյունավետ կառավարման հիման վրա ստանալու հանրությանը ծառայություններ մատուցելու գործում իրենց կատարած ներդրումների ողջամիտ արժեքի նկատմամբ եկամտաբերության ողջամիտ մակարդակ:

***Ներդրումային ծրագրեր և սպառողների շահերին ուղղված աշխատանքներ:***

Կարգավորման կարևոր լծակներից է կարգավորվող ընկերությունների ներդրումային ծրագրերի համաձայնեցումը Հանձնաժողովի հետ, ինչը հնարավորություն է տալիս վերահսկելու ներդրումների արդյունավետությունը՝ դրանք նպատակաուղղելով բնագավառներում նորարարական, ավելի էներգախնայող և

արդյունավետ տեխնոլոգիաների կիրառմանը, սպառողներին մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը և մաշված սարքավորումների փոխարինմանը կամ ենթակառուցվածքների վերակառուցմանը:

Կարգավորվող ընկերությունների կողմից սպառողների սպասարկման որակի սահմանված ցուցանիշների ապահովման գործընթացը մշտապես կգտնվի Հանձնաժողովի ուշադրության կենտրոնում ինչպես կարգավորվող ընկերությունների կողմից ներկայացվող տեղեկատվությունների վերլուծության, այնպես էլ՝ տեղերում իրականացվող ուսումնասիրությունների միջոցով:

Հաշվի առնելով, որ էներգետիկայի ոլորտում ներդրումային ծրագրերը կարևոր նշանակություն ունեն ինչպես բնագավառների, այնպես էլ ամբողջ տնտեսության, սպառողների սպասարկման որակի համար ու փոխկապակցված են զբաղվածության ցուցանիշների հետ, Հանձնաժողովը փորձելու է դրանք դիտարկել որպես սակագների ձևավորման հիմնական գործոն, և դրանց հիման վրա կորոշվեն ներդրումների վերադարձելիության ողջամիտ ժամկետներն ու կսահմանվեն ողջամիտ սակագներ:

***Չեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության), հեռուստատեսության և ռադիոյի ու փոստային կապի բնագավառներում*** գործող ընկերությունների ներդրումային ծրագրերը կուղղվեն մասնավորապես.

- գործող սակագների նվազեցման, ավելի նվազ արժեքներով փաթեթների ներդրման, ձեռք բերվող «ԱՅՓԻ» տարանցման կապուղիների թողունակության, արագության ավելացմանն ուղղված աշխատանքներին,

- Սողք-Քարվաճառ երկրորդ՝ օպտիկամանրաթելային մալուխային գծի լրիվությամբ գործարկմանը,

- ինտերնետ ծառայության հասանելիությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մոտ 20 համայնքներում ապահովելուն ուղղված աշխատանքներին,

- բազային կայաններում և վերահաղորդիչներում օպտիկամանրաթելային մալուխի անցկացման աշխատանքներին,

- 2-րդ և 3-րդ սերունդների ցանցերի բազային կայանների ներդրման և ընդլայնման աշխատանքներին, ինչը կնպաստի թողունակության ավելացմանը ավելի քան 2 անգամ, որի շնորհիվ կապի ծառայությունների կիրառումը կլինի ավելի արագ և որակյալ,

- Ստեփանակերտ քաղաքի մի շարք թաղամասերում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջաններում օպտիկամանրաթելային մալուխի անցկացման, ցանցի ընդլայնման, վերանորոգման և ձևափոխման աշխատանքներին՝ բնակչությանը կապի ծառայություններից օգտվելու հնարավորություն ընձեռելու համար,

- բջջային ծածկույթը բարելավելու նպատակով:

## **II. Տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառ**

Հանձնաժողովը, օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում, 2017 թվականի ընթացքում շարունակելու է ուսումնասիրությունները տարբեր ապրանքային շուկաներում՝ գերիշխող դիրքի բացահայտման և չարաշահման, հակամրցակցային համաձայնությունների, անբարեխիղճ մրցակցության դեպքերի բացահայտման, համակենտրոնացման նկատմամբ իրականացվող վերահսկողության, ինչպես նաև շուկաներում անհավասար մրցակցային միջավայր ձևավորող

երևույթների բացահայտման ուղղությամբ: Շարունակվելու են տնտեսավարող սուբյեկտների կողմից ներկայացված տեղեկատվության արժանահավատության, տնտեսավարող սուբյեկտի փաստացի գործունեության բացահայտման և Հանձնաժողովի որոշումների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացումը ստուգումների, հսկիչ գնումների և դիտանցումների միջոցով: Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը առավելագույնս նպաստելու է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հանձնաժողովի՝ Եվրասիական տնտեսական միությանն ու ԱՊՀ անդամ պետությունների տնտեսություններին ինտեգրմանը:

Հանձնաժողովը ընթացիկ տարում իրականացրել է սեղմված գազ, բենզին, հավի ձու և հաց ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտների վարքագծի ուսումնասիրություններ՝ կապված ընկերությունների կողմից իրականացվող գնային քաղաքականության հետ: Կատարված ուսումնասիրությունների համաձայն՝ 1 խ.մ սեղմված գազի և փոքր մատնաքաշ հացի իրացման գները նվազել են 10 դրամով, իսկ բենզինի և դիզվառելիքի գները 2016 թվականի ընթացքում 1 լիտրի համար նվազել են համապատասխանաբար 60 և 70 դրամով: Հավի ձվի իրացման գինը գտնվում է նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի նույն գնային մակարդակի վրա:

Ներկայումս հաշվառված են և վերահսկվում են 53 ապրանքային շուկաներում գործող 5 մենաշնորհ և 27 գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտներ:

Հանձնաժողովը հետևում է նաև առևտրային ցանցերի ձևավորման գործընթացին, ուսումնասիրությունների արդյունքում բացահայտում և վերահսկողություն է սահմանում գերիշխող դիրք ունեցող առևտրային ցանցերի նկատմամբ:

Հանձնաժողովի համապատասխան որոշումներով հաստատված՝ դեղերի և պարենային ապրանքների մանրածախ ոլորտներում այժմ գործում է գերիշխող դիրք ունեցող 5 առևտրային ցանց:

**Ապրանքային շուկաների ուսումնասիրություն:** Հանձնաժողովը պարբերաբար իրականացնելու է առանձին ապրանքային շուկաների ուսումնասիրություններ՝ ազատ և արդյունավետ մրցակցային միջավայրի ձևավորման և կատարելագործման նպատակով:

Ապրանքային շուկաներում տնտեսական մրցակցության իրավիճակի գնահատման, անհրաժեշտ միջավայր ապահովելու և տեղի ունեցող փոփոխությունների դրական կամ բացասական դինամիկան արձանագրելու նպատակով կուսումնասիրվեն նոր ապրանքային շուկաների կառուցվածքները և շուկայում առկա մրցակցային խնդիրները: Ուսումնասիրությունների ընթացքում ուշադրությունը կենտրոնացվելու է առաջին անհրաժեշտության ապրանքային շուկաներում գնագոյացման ընթացքի վրա, քանի որ այն կենսական նշանակություն ունի հասարակության համար և հաճախ է մտահոգությունների տեղիք տալիս:

**Գերիշխող դիրքի վերահսկողություն:** Հանձնաժողովն ուշադրության կենտրոնում է պահելու նաև ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտների գործունեությունը, քանի որ դրանց կողմից իրականացվող գնային քաղաքականությունը վճռորոշ ազդեցություն է թողնում շուկայում գների ձևավորման գործում:

Աշխատանքներ կիրականացվեն մրցակցային անհավասար պայմանների առաջացման, տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ խտրական պայմանների կիրառման, տնտեսավարող սուբյեկտի շուկա մուտք գործելուն խոչընդոտելու կամ շուկայից դուրս մղելու հետ կապված գործողությունների բացահայտման և անհրաժեշտ միջոցառումների իրականացման ուղղությամբ: Կշարունակվեն պարենային և ոչ պարենային ապրանքային շուկաների շաբաթական դիտանցումները: Դիտանցումներ կիրականացվեն ինչպես Ստեփանակերտ քաղաքում, այնպես էլ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջաններում:

**Անբարեխիղճ մրցակցության բացահայտում, կանխարգելում:** Ապրանքային շուկաներում բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր ապահովելու նպատակով Հանձնաժողովը 2017 թվականի ընթացքում կշարունակի անբարեխիղճ մրցակցության բացահայտման, կանխման և արգելման ուղղությամբ աշխատանքների իրականացումը: Փորձը ցույց է տվել, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում անբարեխիղճ մրցակցությունը հիմնականում դրսևորվում է հասարակության մոլորեցման և շփոթեցման միջոցներով: Հանձնաժողովը հետևողական գործունեություն կծավալի անբարեխիղճ մրցակցության դեպքերը բացառելու համար՝ շաբաթական դիտանցումների և լրատվամիջոցների հրապարակումներից հետևելու միջոցով:

Հանձնաժողովը կատարած աշխատանքների հաշվառման հիման վրա իրականացնելու է վերլուծություններ և վերլուծության արդյունքներից ելնելով ընդունելու է շուկայում մրցակցային միջավայրի բարելավմանն ուղղված համապատասխան որոշումներ:

### **III. Համագործակցություն Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական կառավարման և այլ մարմինների հետ**

Հանձնաժողովը ծրագրային տարում շարունակելու է ակտիվ համագործակցությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդիր, պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, գերատեսչությունների, Հայաստանի Հանրապետության գործընկեր հանձնաժողովների, հասարակական կազմակերպությունների, զանգվածային լրատվամիջոցների և համագործակցություն հայցող այլ մարմինների հետ: Դա ենթադրում է համակարգված գործունեություն արդյունավետ սակագների, գների ձևավորում, սահմանում և տնտեսական մրցակցային միջավայրի կատարելագործում:

Ներկայումս համագործակցությունը ծավալվում է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող և տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովների հետ 2016 թվականին կնքված, իսկ Հայաստանի Հանրապետության հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի հետ՝ 2015 թվականին կնքված համատեղ աշխատանքային ծրագրերի շրջանակներում:

Ընթացիկ տարում 10 անգամ կազմակերպվել են փոխադարձ այցելություններ Հայաստանի Հանրապետության գործընկեր հանձնաժողովների հետ: Հանձնաժողովի պատվիրակությունը մասնակցել է կարգավորող մարմինների եվրոպական պլատֆորմի (EPRA) անդամների 44-րդ աշնանային նստաշրջանի հետ կապված

միջոցառումներին: Մասնակցել է նաև Ուկրաինայի մայրաքաղաք Կիևում կայացած Բենչմարքինգի էքսպերտային աշխատանքային խմբի էլեկտրոնային հաղորդակցության կարգավորողների Արևելյան գործընկերության (EaPeReg) երկրորդ և Սպառողների իրավունքների ու հնարավորությունների ընդլայնմանը նվիրված տեխնիկական սեմինարներին:

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովների համատեղ նախաձեռնությամբ և օժանդակությամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում բացվել է ռադիոսպորտի ֆեդերացիա:

**Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունների կարգավորման հանձնաժողովի հետ** արդյունավետ համագործակցությունը կշարունակվի 2017 թվականի ընթացքում: Մասնավորապես, նախատեսվում է երկու հանձնաժողովների համատեղ աշխատանքային ծրագրի շրջանակում կազմակերպել փոխադարձ այցելություններ, համատեղ նիստեր, Հանձնաժողովի աշխատակազմի մասնագետների ընդգրկում Հայաստանի Հանրապետության պատվիրակության կազմում արտասահմանյան գործուղումների ժամանակ, փորձի փոխանակման նպատակով վերապատրաստման դասընթացներին և սեմինար պարապմունքներին մասնակցության ապահովում: Նախատեսվում են նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Էներգետիկայի մասին» օրենքում և ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծերի ու այլ իրավական ակտերի համատեղ մշակում և լրամշակում:

**Հայաստանի Հանրապետության հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի հետ** աշխատանքներ կտարվեն Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հեռուստառադիոընկերությունների միջև արդեն ստեղծված համագործակցության դաշտի ընդլայնման ուղղությամբ: Ծրագրվում է իրականացնել համատեղ փաստաթղթերի մշակում, Հանձնաժողովների որոշումների փոխադարձ փոխանակում, փոխադարձ այցելությունների կազմակերպում, Հանձնաժողովի աշխատակազմի մասնագետների ընդգրկում Հայաստանի Հանրապետության պատվիրակության կազմում արտասահմանյան գործուղումների ժամանակ, համատեղ ուսումնասիրությունների, վարույթների, դիտանցումների, ստուգումների իրականացում և պրակտիկ օժանդակության ցուցաբերում, նոր տեխնիկական միջոցների և տեխնոլոգիաների ներդրման փորձի փոխանակում:

**Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի հետ`** ըստ երկու Հանձնաժողովների միջև կնքված 2016-2017 թվականների համատեղ աշխատանքային ծրագրի նախատեսվում են աշխատանքներ` կապված իրավական ակտերի մշակման, համատեղ ուսումնասիրությունների իրականացման հետ, հանձնաժողովների անդամների և աշխատակազմերի փոխադարձ այցելություններ, միջազգային կազմակերպությունների կողմից կազմակերպվող միջոցառումներին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանձնաժողովի մասնակցության ապահովում, համատեղ նիստերի և քննարկումների կազմակերպում: Ծրագրային տարվա ընթացքում կիրականացվեն առաջին անհրաժեշտության ապրանքների մանրածախ գների վերաբերյալ

տեղեկությունների փոխանակում, որը հնարավորություն կտա ժամանակին և ճիշտ գնահատել շուկայում տեղի ունեցող գնային փոփոխությունները:

Արդյունավետ համագործակցություն է ծավալվել **Լեռնային Ղարաբաղի Հանրապետության** Էկոնոմիկայի, արդարադատության, ֆինանսների նախարարությունների, ազգային վիճակագրական ծառայության, ինչպես նաև շահագրգիռ այլ պետական մարմինների հետ, ինչը շարունակական բնույթ կկրի նաև 2017 թվականի ընթացքում: Նախատեսվում է կնքել համագործակցության հուշագրեր ոլորտին առնչվող շահագրգիռ կողմերի հետ:

#### **IV. Հանձնաժողովի գործունեության հրապարակայնության, թափանցիկության ապահովումը**

Հանձնաժողովը օրենքով իրեն վերապահված իրավասությունները, կարգավորման գործընթացը իրականացնում է հրապարակային և թափանցիկ: Հանձնաժողովի նիստերը մեծամասամբ կազմակերպվում են դռնբաց, լրատվամիջոցների ներկայացուցիչների մասնակցությամբ, նկարահանվում և ընդգրկվում են հանրային հեռուստատեսության եթերում: Նիստերի մասին տեղեկատվություններ են տեղադրվում նաև Հանձնաժողովի ինտերնետային և ֆեյսբուքյան էջերում, ընդունված որոշումներով համալրվում է Հանձնաժողովի որոշումների էլեկտրոնային բազան:

2017 թվականի ընթացքում, հավատարիմ իր հրապարակային և թափանցիկ գործելաոճին, ինչպես նաև նպատակ ունենալով հանրությանը հնարավորինս ներգրավելու հանրային ծառայությունների կարգավորման գործընթացում, Հանձնաժողովն իր պաշտոնական ինտերնետային կայքում շարունակաբար կհրապարակի մանրամասն տեղեկատվություն նիստերում քննարկվող հարցերի վերաբերյալ:

Կարևորելով զանգվածային լրատվության միջոցների հետ համագործակցությունը՝ Հանձնաժողովը մշտապես ուշադրության կենտրոնում է պահելու նրանց կողմից բարձրացված հարցերը: Ինչպես յուրաքանչյուր տարի, այնպես էլ 2017 թվականին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետներում Հանձնաժողովը պարզաբանումներ կտրամադրի զանգվածային լրատվության գրավոր և բանավոր հարցադրումներին, կապահովի նրանց մասնակցությունը Հանձնաժողովի նիստերին, ինչը կնպաստի կարգավորող մարմնի թափանցիկության, հրապարակայնության մակարդակի և սպառողների իրազեկվածության աստիճանի բարձրացմանը:

Հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքը և ֆեյսբուքյան էջը, որոնք թարմացվում են ամենօրյա կարգով, զանգվածային լրատվամիջոցներին, սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպություններին և ցանկացած շահագրգիռ անձի հնարավորություն են ընձեռում տեղեկանալու հանրային ծառայությունների ոլորտի կարգավորման գործընթացին, ծանոթանալու Հանձնաժողովի գործունեությանը, ստանալու ծառայությունների սպասարկման որակի և սպառողի իրավունքների վերաբերյալ սպառիչ տեղեկատվություն:

Հանձնաժողովում շարունակելու է գործել շուրջօրյա թեժ գիծ՝ բնակչության և սպառողների հետ կապն առավել արդյունավետ և մատչելի դարձնելու նպատակով:

## V. Հանձնաժողովի բյուջետային մուտքերի ապահովումը

2017 թվականին Հանձնաժողովի վերահսկողության ներքո կգտնվի կարգավորվող ընկերությունների կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե մուտքերի ապահովման գործընթացը՝ լիցենզիաների (թույլտվությունների) տուրքերի, ռադիոհաճախականությունների տրամադրման և օգտագործման վճարների, կարգավորման պարտադիր վճարների մասով: Մուտքերը պետական բյուջե նախատեսվում են **457557,3** հազ. դրամ (կից աղյուսակ):

Հանձնաժողովի պահպանման և գործունեության համար անհրաժեշտ ֆինանսավորումն իրականացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից (ծևավորվում է կարգավորման պարտադիր վճարներից) և առանձին տողով ամփոփ ընդգրկվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի նախագծում՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի հաստատմանը ներկայացնելու նպատակով: 2017 թվականին այն կազմելու է **167 831,2** հազ. դրամ:

Ամփոփելով կատարման ենթակա աշխատանքների սույն ծրագիրը և մշտապես ունենալով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աջակցությունը՝ Հանձնաժողովն ակնկալում է համակողմանի աջակցություն տարբեր կառույցների ու հասարակության կողմից և բաց է Հանձնաժողովի գործունեությանը վերաբերող խնդիրների քննարկման համար:

## ԱՂՅՈՒՍԱԿ

### 2017 թվականի կանխատեսվող բյուջետային մուտքերի

Եկամտատեսակը	Գումարը (հազար ՀՀ դրամ)
Ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների տրամադրման վճարներ	266,0
Ռադիոհաճախականությունների օգտագործման վճարներ	266065,1
Ռադիոհաղորդումների հեռարձակման համար արտոնագրային (լիցենզային) վճար	70,0
Պետական տուրքեր	23325,0
Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարներ	167831,2
<b>Ընդամենը</b>	<b>457557,3</b>

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
 ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ  
 ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ  
 ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Հ. ԹՈՐՈՍՅԱՆ**